ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

ՀԵՆՐԻԽ ԱՐԹՈՒՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի սեպտեմբերի 9-ի №07/11.1/7478-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի №12 շենքի №8 բնակարանից (ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված են Արթուր Էդուարդի, Հենրիխ և Էդուարդ Արթուրի Դանիելյանները) 894.46ՄՀց հաճախականությամբ արձանագրվել են խանգարումներ առաջացնող կողմնակի ճառագայթումներ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Արթուր, Հենրիխ և Էդուարդ Դանիելյաններին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 12-ի №ՍԾ/34.2-Մ2-9/3144-2022 գրությունը, որին ի պատասխան Հենրիխ Արթուրի Դանիելյանը հայտնել է, որ վերահաղորդիչ սարքի աշխատանքը դադարեցվել է,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Հենրիխ Արթուրի Դանիելյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 894.46ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի

մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հենրիխ Արթուրի Դանիելյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 894.46ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիխ Արթուրի Դանիելյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.